«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 71/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 22.02.2022թ. ժամը 13:15

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրենից `21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումի հետագա ընթացքը ապահովելու`սնանկության գործով կառավարիչ՝ Սոնա Վահագի Ավագյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ 2022 թվականի Փետրվարի 22-ին ժամ 13:00-ին՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝«ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրեն՝Ա.Ելինյանը :
Սնանկության գործով կառավարիչ՝ Սոնա Վահագի Ավագյանը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Դիմումատու՝«ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրեն՝Ա.Ելինյանը և Սնանկության գործով կառավարիչ՝ Սոնա Վահագի Ավագյանը պատշաճ ծանուցված լինելով նիստի տեղի և ժամի վերաբերյալ իրենց ներկայությունը չեն ապահովել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրենից `21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումի հետագա ընթացքը ապահովելու`սնանկության գործով կառավարիչ՝ Սոնա Վահագի Ավագյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և նշեց,որ դիմումատուն և սնանկության գործով կառավարիչը պատշաճ ցանուցված լինելով նիստի տեղի և ժամի վերաբերյալ չեն ներկայացել:Նախագահն ներկայացրեց տնօրինության կողմից հանձնաժողովին,14.02.2022թ-ին ուղղված լրացուցիչ գրությունը և մասնավորեցրեց,որ `21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումը վերաբերվում է սնանկության գործով կառավարչի կողմից անդամավճարների պարտքի առկայության փաստին,իսկ լրացուցիչ դիմումով հանտնվում է,որ կառավարչի կողմից անդամավճարների պարտքը մարվել է, կցելով համապատասխան վճարման փաստաթղթերի լուսապատճենները:`
Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ:Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով

ներկայացված փաստական հանգամանքները կառավարչի կողմից ինքնակամ մինչև կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը վերացրել է կարգապահական խախտումը ուստի կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանը նշեց որ չնայած այն փատին որ կառավարչի կողմից առկա էր «Անդամավճարների,մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ» «ՍԳԿԿ» ԻԿԿ հաստատված Կարգի 2-րդ մասի խախտում,բայց կառավարչի կողմից այն վերացվել է ինքնակամ,ուստի «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով կարգապահական վարույթը պետք է կարճվի:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված լրացուցիչ գրության կից փաստաթղթերը և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրենից՝21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումի հետագա ընթացքը ապահովելու՝սնանկության գործով կառավարիչ՝ Սոնա Վահագի Ավագյանի գործողությունների /անգործության/ և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը՝«Սնանկության մասին»ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով, «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 1-ին ենթակետի սահմանած կարգով՝ կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման՝ անդամավճարների պարտքի մարման՝կարգապահական վարույթ հարուցելու հանգամանքի ինքնակամ վերացման, պատճառաբանությամբ:

Միաժամանակ հանձնարարել կառավարչին հետագա գործունեության ընթացքում պահպանել «Անդամավճարների,մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ» «ՍԳԿԿ» ԻԿԿ հաստատված Կարգի կանոնները:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան